


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ	հաւար
Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Անկախ	հաւար
Տարեկան	3 ծր.
Վեցամսեայ	4.50 "

Մանուցանելու արդ արժեքն երեսին հաւար 40 ս. իսկ վերջին երեսին հաւար 20 սանթրիմ. է. երեսին աւելի անգամներու հաւար 20 0/0 զեղյ կըլ լայն:

Վաճառքի հաւար մի քանի 10 սանթրիմ



ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse
W. 4.
(Aubriche)
Vienn

Նախկին և նոր հրկից
հարկազուրկ հաս-
ցեին:

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjourn“
Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար
ոսկ
(20 ՍԱՆԹՐԻՄ)
Պուշկարինյ հաւար
մեկի
(15 ՍԱՆԹՐԻՄ)

Գրութիւնք ևս չեն տուիր

ՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ. ՏԱՐԱԿՈՒՆ ԶՈՐԵՔԵԱԲ. ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՍԿ ՎՃԱՐԵ

ԴՈՐՁԵԱԼ ՀՆՁՍԱԿԵԱՆ ՍԻՑԵՍԻ ՄԱՍԻՆ

Անկախ չեմ համարում կրկին խօսելու հնչակեաների իրար սպանելու սխառմի մասին, որովհետեւ մի քանի դաշակաբանները բարեկամների անցեալ օրվան յօդաւանդ առթիւ եղած գիտողութիւնները աւելի զօրաւոր կերպով ապացուցում են ինչ մեր ամենալաւ տարրի մէջ իսկ յեղափոխական սպանութիւնների մասին սխալ գաղափար կայ կազմված:

Կարծում են, որ ամեն մարդ արժանի է մահուան պատժի ու վախ կամ այն ձեւով վնասակար կամ խոչնդոտ է ներկայանում մեր յեղափոխական գործին, կամ թէ արտաքուստ յեղափոխութիւն է քարոզում ու ներքուստ կեղծ է, կամ իր բռնած ուղղութեամբ պատճառ է դառնում յեղափոխական պատկառումների, և կամ վերջապէս ինքը շատ մեծ հայրենասէր է եղել ժամանակին, բայց վերջը իբր թէ սխալ ուղղութեան հետեւելով գործիք է դառնում ու է խմբի ձեռքում:

Նախ այստեղ պարզենք յեղափոխական կազմակերպութիւնների զարգանալու համար գործ. գրված հիմնական միջոցը:

Եղափոխական կազմակերպութիւնները զարգանում և ծաւալվում են գաղափարի տարածումով և ժողովրդի շահերին յայտնի, փաստով փրանքներ հասցնող անհատների ու խմբերի ջանքով, մահուան միջոցով:

Մահուան որոշումը տալիս է անկողնակալը, անձնական հաշիւներ չունեցող և լուրջ կերպով ձեռքում գտնված իրական փաստերը ուսումնասիրելու ընդունակ յեղափոխականներից կազմված գաղափարներ կամ յեղափոխական մարմինը:

Հիմա խօսքերն են մասնաւորերը:

Մեր առջեւում է գրված Հնչակեան կուսակցութիւնը՝ իր երկու

կու հատուածներով:
Դրանք մի տարի առաջ իրար վրա ամենավատ գաղափարն ունէին. յետոյ յանկարծ այդ բոլորը մոռացան և գրկախառնվեցին. վրկին բաժանվեցին և այսօր կրկին մէկը միւսին ներկայացնում է իբր ամենաաղտոտ ու ցած մարդկանցից կազմված խմբեր, էլ ինչի՞ մէջ առես իրար մեղադրում են...:

Ձը նայելով այդ բոլորին՝ երկուսն էլ յեղափոխութիւն են քարոզում ժողովրդին, թէն առանց մի յեղափոխական գործ կատարելու երկար տարիների ընթացքում:

Արեւմտեան ժողովուրդի մէջ խաբույններ կան, իսկ մեր երկու հատուածներից էլ, բայց միայն այդ պատճառով ոչ ոք իրաւունք չունի երկու հատուածներին էլ սպանելով վերջացնել:

Ինչպէս որ ոչ ոք իրաւունք չունի իրար հետ կուռղ. բայց յեղափոխութիւն քարոզող երկու հատուածներին մահով ջնջելու, այնպէս էլ հնչակեան ոչ մի հատուած բարոյական իրաւունք չունի միւս հատուածի գոյութեան վերջ տալ նրա անգամներին սպանելով, որովհետեւ զեռ բոլորովին ապացուցված չէ թէ այդ հատուածներից որն է աւելի մեղաւորը հայ ազատագրութեան գործի դէմ:

Երկու հատուածների մէջ այսօր աւելի կիրքը և անձնական հաշիւներն են դեր խաղում, ուրեմն անկարելի է որ իրար հանդէպ անկողնակալ որոշումներ տրվին:

Սյր աչքի առեւ ունենալով, մենք հեռուից գիտողներս, անկարող ենք ասել թէ ով է աւելի վընասակար մարդ. Ձիթ չեանք թէ Սպարկապետները, Խուչպուրեանք թէ Արզումանեանքը ևն:

Եւ քանի որ այդ որոշել չենք կարող, ուրեմն չենք էլ կարող այդ սեռակ մարդկանց կազմից թելագրված մահուան որոշումը յեղափոխութեան համար նպաստաւոր համարել:

Այն քառասունը դուրսիւնը որ

տիրում է հնչակեան հատուածների հոգեկան և մտային աշխարհում, մեզ վրայ բարոյական պարտք է դնում թերահաւատութեամբ վերաբերվել Հնչակեանների միմեանց համար տուած վրկայութիւններին, նաեւ միշտ պախարակել այն քայլերը որոնք եղաքայրասպանութիւնը զարգացնելու են ձգտում մեր մէջ:

Վերակազմակերպի ուղղութիւնը յեղափոխութեան նպատակով չէր, նրանց մէջ կային և կան նոյն իսկ հակադրադրական տիպեր, մենք շատ համակրեցինք հին հնչակեան հատուածի որոշ քայլին, որով նրանք միանգամից ուղեցին ազատվել այն տեսակ մի տարրից, որը կասեցնում էր այդ յեղափոխական մարմնի գործունէութիւնը, բայց այդ չէր նշանակում թէ մենք պէտք է քաջաբերենք և ընկերասպանութիւնը, մահաւանդ այն մեծաքանակ յայտարարութիւններից յետոյ, որով կասկածի սակ է ընկնում և հին հնչակեանների ուղղամտութիւնը երկրորդ բաժանման մէջ:

Յետոյ վերջին ժամանակներում պարզվեց որ հին հնչակեանների մէջ էլ կան ազտոտ, յեղափոխականի բարձր կոչմանը ոչ արժանի տիպեր, որոնք ոչ ընչով չեն տարբերվում վերակազմակերպի մէջ գտնվող յայտնի ստորին տիպերից. և յանկարծ այդ տեսակ մարդիկ թոյլ են տալիս, եթէ իրապէս մեր լըսածները ճիշդ են, սպանել տալ ուղղակի կամ անուղղակի կերպով այդ միւսներին է, Միսին, Խուչպուրեանին և Ձիթ չեանին:

Ընդունենք որ Ձիթ չեանը այդ պիսի մը լիալածանքի արժանի տիպ է, բայց միւս երկուսը ոչ, ուրեմն վտանգի տակ գտնվող երեքից երկուսը յեղափոխականի դաշինքով կամ գնդակով մեռնելու արժանի մարդիկ չեն:

Բայց Ձիթ չեանի մասին էլ դեռ եւս այնպիսի փաստեր չեն տեսվ մեզ որ կարելի լինէր ասել թէ

նրան կարծէ սպանել. Ձիթ չեանը պատուելիական մի կեղծ և ինտրիգան տիպ է, ուղում է ինքզինքը յեղափոխական ծախել և դիրք շինել. Լիդպիսի տիպեր կան և ինչ հնչակեանների մէջ, և զուցէ Ձիթ չեանից էլ աւելի վատ տեսակը. ուրեմն նրանց էլ պէտք է սպանել. բայց ո՞ր կը հասնենք այդ սխառմով:

Մենք գեռ կարող էինք մի քիչ հաշտ աչքով նայել այդ տեսակ պատիժների վրա, եթէ Ձիթ չեանի պէս մարդիկ մեծ ժողովրդականութիւն ունենային հայ ժողովրդի մէջ և մեծ վնասներ հասցնէին. բայց ի՞նչ է Ձիթ չեանը. մի սովորական պատուելի խաբարայ որ միայն սգէտ մարդկանց կարող է գրաւել, այն էլ միայն կարճ ժամանակով. Միթէ այդ ախպերը այնքան զօրեղ են, որ միայն մահով կարելի է չեղոքացնել դրանց. ոչ, կեանքը ինքը կը չեղոքացնի դրանց, առանց արիւնի մէջ լողալու:

Եթէ յեղափոխական կազմակերպութիւնները այդպէս թեթեւ կերպով մահուան որոշումներ տալին, հիմա Դաշակցութիւնը հարիւրաւոր հայեր պէտք է սպանած լինէր, մահաւանդ հակադրադրական կատաղի հոսանքի միջոցին:

Ամեն յանցանք իր համեմատ պատիժ ունի:

Եթէ հնար լինէր Ձիթ չեաններին մի քանի ամսով բանտարկել, գուցէ ոչ ոք դրա համար չը բողոքէր. բայց քանի որ յեղափոխական մարմինները միայն մահուան պատիժը ունեն, ուրեմն շատ և շատ պզուշ պէտք է լինեն այդ որոշումների մէջ, ուրեմն, եթէ իսկապէս հին հնչակեանները որոշել են խնդրի նիւթ գարձած մարդկանց և գեռ ուրիշներին սպանել, շատ վտանգաւոր և ստոր գործի են սկսել. Լիդ չեանի մէջ նրանք կարողանան ապացուցել որ իսկապէս այդ մարդիկ մահուան արժանի են:

Տգէտ ամբոխին չը պէտք է սո-

վորցնել յիմար բաների համար հայ պանել. նրա մէջ արդէն վայրենական գծեր կան. արհեստականպէս և խաբելով այդ յատկութիւնը զարգացնելը բացարձակ լրբութիւն և գազանութիւն է:

Մենք որչափ էլ կարևորութիւն չը տանք, յեղափոխական ուժի և բարոյական տեսակէտից, Հնչակեան երկու հատածներին էլ, այնու ամենայնիւ չենք ցանկանայ որ նրանք ի զուր տեղը իրենց ձեռքերը կարմրացնեն հայ արիւնով. որովհետեւ այդ անպատեբեր է թէ հայ ժողովրդին, թէ հայ յեղափոխութեան և թէ իրենց հնչակեանների համար: Վերջապէս ժամանակ է ապացուցելու որ մենք այնքան ստոր ժողովուրդ չենք և կիրքը չէ միայն մեր ղեկավարը:

Այսօր հայ ժողովրդի մեծամասնութեան համար ամբողջ Հնչակեանութիւնը իր մի քանի տարվայ զուտ և ոգեւորչ յեղափոխական գործունէութիւնից յետոյ ընկաւ բարոյապէս: Այդ կուսակցութիւնը ահագին գումարներ վատնեց և յեղափոխական ոչ մի գործ չարար մի քանի տարիներ ընթացում: Նրա մէջ տեղի ունեցան հայ յեղափոխութիւնը վարկաբեկող, հակայեղափոխականների ձեռքում յեղափոխութեան գէժ փաստ դարձող շատ տղեղ երեւոյթներ: Մի խօսքով Հնչակեանութիւնը վերջին տարիներում ահագին բարոյական և նիւթական փնսա հասցրեց հայութեան: Ուրեմն, եթէ ընկերասպանութեան և հիւրաբանականութեան սխտեմը ընդունենք, Դաշնակցութիւնը իրբեւ յարատեւող, միակ կանգուն հայ յեղափոխական մարմին իրաւունք ունէր և ունի առանց այնչափութեան անխտիր կերպով կոտորել ընդ որ հնչակեաններին, արդարանալով որ հայ ժողովրդի շահը և հայ յեղափոխութեան յաջողութիւնը այդ էր պահանջում և պահանջում է:

Եւ միթէ դա հրեշտակն և գաղանային գործ չէ՞ր լինի: Միթէ Դաշնակցութիւնը կարող էր արդարանալ իր եղբայրասպանութեան մէջ: Իհարկէ ոչ: Վ.Ր.ԴՊ

ԽՈՎՄԱ ԴԱՒԻԴՈՎԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

(Շա. Ասիոյի թիւն և վերջ)
Երկրորդ օրը Դաւիթովի հետ գնացինք Էրոտեամովոյի բնակէն, քաղաքից դուրս, գիրեզմանների մօտ, Մառերի արունքներով երևում էր ծովը, երկինքը տեղ տեղ ամպամած էր, արեւը բաց խփիկ անկող լուսաւորում էր մեզմօրէն: Մենք միայն էինք մեզ լսող չկար և Դաւիթովը կրկին խօսում էր իրենց գործերի մասին ու հարցու փորձում մեր գործերից:

Իրենց գործերի մասին խօսած միջոցին նա բաւական ողբերգից, ու յայտարարեց որ ամեն միջոց պէտք է գործ դնեն թուրքերին շատ վնասելու, ոչ մի միջոց որքան էլ որ նա խիստ լինի ձեռքից չը պէտք է թողնենք. ասում էր նա գարեջրի բաժակը պինդ սեղմելով:
Եւ յանկարծ նրա այքը ընկաւ ծովին. բորբոքված յեղափոխականը բացականցից:

— Հրաշալի տեղ է, մանաւանդ լաւ են մտածել որ այս ծառերը տընկել են այստեղ: Ծովը մաս մաս ես տեսնում, չեքտեղով կարծես արձիճից շինված ճանապարհներ լինեն. հարթ և անծայր: Գիտես, ժամանակ կայ որ ես չեմ սիրում ծովը իր ամբողջ մեծութեամբ տեսնել, հսկայական, խորհրդաւոր ուժէ ներկայանում, զգում ես մարդկային թուլութիւնը այդ մեծ ուժի հանդէպ:

Իսկ մարդի համար իր թուլութիւնը և անկարողութիւնը ուժի հանդէպ զգալուց, ճանաչելուց աւելի ծանր բան չը կայ: Ամենակորովի մարդն անգամ սղապիսի պարագայում կարող է թուլանալ:
Եւ կրկին յանկարծ խօսքը փոխեց:
— Մենք զարմանում էինք որ ձեր մէջ յեղափոխական գնադան մանր խմբեր գոյութիւն ունեն: Եւ ձեր մէջ կոռուները այնքան սուր կերպարանք էին ընդունում:

Հիմա մերը աւելի արտափելի է, Անցեալ օր ես ն. քաղաքում էի. պատահեցի Միխայէլովի և կուսակցութիւնից մէկին. որ առաջ մեզ հետ էր և Բորխին պաշտոններից մէկը, հիմա ամենակատարի հակառակորդ էր դարձել. բայց նրանց միշտ ծիծաղում է: Ուզում էր խաղաղութիւնը որ լարան չկազմեմ, բայց չը կարողացաւ: Ձէ պէտք է շտապել գործի վայրը գնալ, Բուրբուրիայում չարժէ մնալ. միշտուրդը շատ է փչանում յեղձուցիչ է դառնում:

— Բորխն էլ պէտք է գնալ, հարցրի ես:

— Անպատճառ, բայց մի քիչ ուշ: Սյր պէտք է. նախ մենք մտնենք տեսնենք ինչ կայ, ինչ չկայ, միւսները մտնում. մենք եթէ ուշանանք այնուհետեւ աւելի շատ կը բամբուսեն թէեւ լաւ չեն անում որ այսպէս շուտ են մտնում, ներսինները առ այժմ չեն ուզում որքի կանգնել. բայց այդ պարունները իրենց անկումը փրկելու համար վճարել են ամեն յիմարութիւն անել: Ինչ սրած, թէ և անժամանակ. բայց պէտք է աշակցել, թէ չէ այնտեղ ժողովուրդը բոլորովին միանալ կը մնայ:

Ու այդ օրվանից այլևս Դաւիթովին չը տեսայ, նա շատ շուտով Մակեդոնիա անցաւ, երկար դիմացաւ, բաւական կտրուներ մղեց իր հրոսախմբով, բաւական թուրք ջարդեց, բայց ինքը մի օր մի Փառաւոր յողթութիւնից յետոյ, երբ թուրքերը փախչելուց վերջը առաջ է անցնում տեսնելու թէ քանի թուրք դիակ կայ ընկած կուր դաշտում. յանկարծ ծառերի մէջ թագնված վիբաւոր թշնամին հրացանի գնդակով մահացու վերք է տալիս քաջարի, բայց համեատ ու արտակարգ քնքուշ զգացումներով համակրելի Դաւիթովին և վերջ տալիս նրա շատ գնահատելի կեանքին:

ՎԱՐԴՈ

ՎԵՐՋԻՆ, ՏՄԻՆԵՐՈՒ ՏՐՆՍՍԱՆ

Արդէն մեր ընթերցողներուն յայտնի է թէ վերջին երեք շուրս տարիներու մէջ Տրանսայի կառավարութիւնը գրեթէ արժատական հասարակականներու ձեռք կը գտնուի, որոնց կառավարութեան կը մասնակցին և ընկերվարականները, ներկայ նախարարացեալ Գոմպ ամեն խոչնդոտ, դիմադրութիւն, էնտրիգներ ու լրագրական յարձակումներ ոտքի տակ առնելով, պողպատէ կամ քով զինուած, Տրանսայի մէջէն արժատախիլ կընէ կրօնական ընկերակցութիւնները, որոնք անթիւ պարագիտներու պէս դարձրէ ի վեր խրուեր էին Քրանտական ժողովրդին մէջ ու կաւերէին անոր ուղեղը եւ սիրտը:

Գոմպին այ թեւեւ է նշանաւոր ժօրէքը, ընկերվարականներուն պարզուրիւ, երեսփոխանական ժողովին մէջ եւ այդ ժողովին փոխ նախագահներէն մին: Ու Քրանտական մամուլը այսօր Գոմպին ամեն մէկ արժատական քայլը ու որոշումը ժօրէսին քէյֆին համար եղած կը հրօշակէ:

Ամեն կողմէ բողոք, կոխ. տոյր ու գործոց կղերամոններ և իրենք կղերները յուսահատութենէ կատաղութեան գազաթնակէտին հասած ամեն միջոցի կը դիմեն կասեցնելու Գոմպը իր բռնած ընթացքէն: Մակայն Գոմպ առաջ կերթայ անընկճելի, պաղարիւն կարծես զգալով որ եթէ յաղթանակը տանի ամենէն մեծ ծառայութիւնը պիտի մատուցանէ իր հայրենակիցներուն, որոնք հոռովէական մեղքով, մարդը մեքենայ դարձնող եկեղեցականներու ձեռքը կորսնցուցած էին մաքի եւ սրտի անկախութիւնը:

Անվին գինւորականութեան մէջ ալ նոր գործը առաջ կը տանի զօրավար Անտարէ: Ու կշտապեն երկու պետական մարդիկն ալ, որ առաջ վերջակէտ գնել բախիբաններուն ազդեցութեանը Տրանսայի մէջ:

Տրանսայի այս ներքին կարուկ, գրեթէ յեղափոխական քաղաքականութիւնը ազդեց և իր արտաքին քաղաքականութեան վրայ:

Անոր դաշնակից Ռուսիա, որ քանի մը տարիներ առաջ շարունակաբար սիւրի պիլիի մէջ էր միտպետականներու, պատահական հասարակապետականներու կառավարութեան հետ այսօր պաղած է դէպի Գոմպի կառավարութիւնը, որուն վարչութեան միջոցին Ռուսիա Տրանսային քանի մը քնքուշ ապագաներ ընդունելէ զատ (սրտաքին քաղաքական խնդիրներու վերաբերմամբ) չը կրցաւ եւ նոր փոխառութիւն մը կընթել:

Ատորմէ այ չը վախցաւ Գոմպի դաշնիցը ու յոտակց բարեկամական յարաբերութիւններ հաստատել Անգլիայի եւ Իտալիայի հետ:
Տրանսայի բռնած վերջին ընթացքը բոլորովին կատարեցուց Ռուսիան եւ ան իր կատարութիւնը ցոյց տալու համար Բեռլինը պիտի երկհարի բաւակի տօնախմբութեան առթիւ գերմանական պատգամաւորութիւնը բացարձակօրէն աւելի նախամեծարեց քան Տրանսային գաղտնիները:

Ռուսական մամուլը աւելի կատարած է Տրանսայի դէմ, մանաւանդ հնչակաւոր շովէն սեօլօճ վերմանս, Ի-

րբու այս փոփոխութեան պատճառաւ միշտ սպառնալիքներ կըլաւ Տրանսայի հասցէին. բայց ինչպէս կերելի ալ ատուք կուտ չեն ընեմ, որովհետեւ Տրանսային քղերկրայեւս ուժեղ կըզգայ եւ չի ուզեր կրակավարներ միտպետութեան մը առջեւը քննիլ:
Մուսանք ըսել որ Տրանսայի այս փոփոխութեան մեծ զարկ տուաւ եւ ներկայ նախագահ Լուպէ, որ ինչպէս կերելի, լիովին համաձայն է արժատական նախարարութեան վարչական հայեցակէտներուն հետ:
Հինգ տաս տարի եւս եթէ շարունակուի այս ուղղութիւնը Տրանսայն բոլորովին պիտի կերպարանափոխուի:

ՊՍՏԵՐՈՂՄԻ ՊԱՐԱԳՍՍԻՆ

Արդեօք պուլկարները պատրաստ են պատերազմելու թուրքերուն հետ, կը հարցուի ամեն կողմ:

Այս խնդրի մասին վիէննայէն «Բաթրի» թերթին հետեւեալները կը գրեն:

«Կարեւոր խնդիրը, որով այս օր պուլկարները դրազած են, այն է թէ պատրաստ են թուրքերոյ հետ պատերազմելու, եթէ ընդհարումը տեղի ունենայ:

«Սօֆիայի գինւորական շրջանակներու մէջ կը պնդեն թէ Պուլկարիան այժմ մասնաւոր պատրաստութիւններ չի տեսնար գինւորներու համար, որովհետեւ հիմա ալ այնչափ պատրաստ է որչափ որ էր շուրս ամիս առաջ:

«Ապաները, քաղաքացիները, զինուորները հաստատապէս համոզուած են որ պուլկարական զօրքը պիտի կարենայ լաւ զիմադրել թրքականին, միայն պահանաւ մը որ Սերպիան և Ռուսիան չեղոք մնան, և մեծ պետութիւններն ալ չը միջամտեն:

«Գիտակ անձնաւորութիւններ կը հաւատանան թէ Պուլկարիան 7 օրուան մէջ կընայ 220,000 զինուոր հանել կոտի դաշտը, որոնցմէ 160,000ը զինուած են Մանլիխէր հրացաններով իսկ 6000 ը պերտաններով:

Այդ 220000էն 130000ը երեք օրուան մէջ կընան պատերազմական վիճակի մէջ դուրսիլ:
Այդ թիւն մէջ չեն մտնար պահեստի զօրքերը:

«Պուլկարներուն հրացան կը պակասի, զօրք բաւական ունին, եւ պուլկարը առաջին կարգի գիւրոր է:

«Չը պէտք է մտնալ որ պուլկարական զօրքը մինակ չը պիտի մնայ անոր դաշնակիցները պիտի ըլլան Մակեդոնացիները, որոնք թուրք զօրքի մէկ կարեւոր մասը պիտի ըզրաղեցնեն:

Մենք մեր կողմէն կաւելցնենք որ պուլկար զօրքը ուրիշ առաւելութիւն մը եւ ունի իր գիմադրութիւնը յարատեւ դարձնելու համար ընդիսկ յաղթական, եթէ իսկպէս ուրիշները իրենց թշնամութեամբ պատճառ չըլաւն Պուլկարիոյ զինուորական ուժին բաժան բաժան ըլլալուն:

Այդ առաւելութիւնը այն է որ պուլկար զինուորը հայրենասիր է և գիտակցութիւն ւնի որ պատերազմը տեղի կուենանայ զարուար վրէժը լուծելու և դեռ մինչեւ օրս թուրքերն ձեռքը յօշոտուող իր Մակեդոնացի եղբայրները ազատելու համար:

ՎԱՐԴՈ

Անդրապարտ յաղթելու գլխաւոր պատճառը պուլկար, զեռ պատերազմական արեւստի մէջ բոլորովին խակ գիւնորին հայրենասիրական վառ ու կորովի գգացմունքն էր, որ անոր բարոյական ուժերը կարծես եռապատկեց իսկ հակառակորդին ուժը իրեն առջեւը պատկերացուց:

Այսօր ըստ երեւութիւն պուլկար ժողովուրդը սկսած 18 տարեկան պատանիներն, անհամբերութեամբ պատերազմի կոպակ, ու այդ անհամբերութիւնը հետզհետէ կը սաստկանայ, եւ թուրքեա եթէ մինչեւ օրս պատերազմ չէ հրատարակած ու դեռ կը վարանի յայտարարել, ատոր գլխաւոր պատճառներէն մէկն ալ անէ որ կողմայ թէ իրեն համար շատ ալ զիւրին գործ չէ պուլկարները յաղթել: Ընդուն է յոյններուն պարտութիւնը թուրքերի քիչ մը սիրտ տուաւ, ու թուրքիս սկսաւ յոխորտալ, բայց այդ յոխորտանքը աւելի արտաքուստ և ցաւած սիրտը, կրէտէն կորսուցնելու պատճառով, միթիւրեւեռ համար էր:

Եթէ պատերազմը երկարատե ըլլայ թուրքերի կոստանթնուլ անկի գէջ պիտի ըլլայ, որովհետեւ զին, որները անօթի մնալէն ձանձրանալով խառնիճաղանձ անհնազանդ ամբարի մը պիտի վերածուին:

Գ

ԿՈՎԿԱՍԻ ՀՍՅԵՐԸ



(ՀԱՆԵՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ)

Կովկասում Հայերը գրեթէ միակ բարեգործողներն են, թէ՛ իրենց հարստութեան եւ թէ՛ զարգացած հանրային բնագործ շնորհիւ: Այդ խոստովանում են նոյնիսկ կովկասի օտարականները: Սակայն հետաքրքիրն այն է, որ չնայած հանրային ու մասնաւոր նկատմաներու, Հայերը չառնուակում են սփռել իրենց քարե-գործութիւնը անխափ թէ՛ Հայերի եւ թէ՛ ոչ-Հայերի վրայ: Այդ հանգամանքը մի կողմից սպառնացանում է Հայերի ոչ-կրթութիւն խառնուածքը, միւս կողմից սոցիալիստ արժանապատուութեան բացակայութիւնը, եւ որովհետեւ վերջինը շատ շեշտուում է կովկասեան Հայերի մէջ կուզեմ հետեւեալ ստիւքերում այդ տեսակէտից քննադատելի տեղիս հայերի բարեգործութեան կերպը:

Վերջինք, օրինակի համար, այդ տեսակի վերջի նորութիւնները: Մտ մի անիս առաջ Պ. Մ. Մանթաշեան, կովկասեան դրամատիկերից անհնազանդութեամբ, Հետադրեց Պետերբուրգի Լուսաւորութեան Նախարարութեան խորհուրդի անգամներին մէկին, որ կը նուիրէ եօթ հարիւր հազար ռուպլի, եթէ Տիֆլիսում բացուի մի որ եւ է բարձրագոյն դպրոց Անցաւ երկու շաբաթ, եւ մի ուրիշ հայ, յայտնի միլեօնատէր, Պ. Մ. Արամեանը յայտնեց տեղիս քաղաքավիտին, որ նուիրում է հարիւր հազար ռուպլի յօգուտ քաղաքային հիւանդանոցի նոր շինութեան, վերջինը արդէն պաշտօնապէս ընդունեց, իսկ առաջինի մասին ցայժմ ոչ մի պատասխան չկայ մայրաքաղաքից: Ըստ կառավարութիւնը վարսուում է քանից Տիֆլիսում բարձրագոյն դպրոցը, որովհետեւ մեր տեսա-

կետից անկախ, շատ հետաքրքիր է նաեւ տէրութեան վերաբերուած գէպի «Անդրկովկասեան դպրոցը», մենք աւելի մանրամասն կանգ կառնենք այդ հարցի վրայ:

Արդէն վաղուց է, որ Տիֆլիս քաղաքը ձգտում է ձեւենալ մի սր եւ է բարձրագոյն դպրոց, եւ որովհետեւ կովկասը հարուստ է հանգրոցելու միւս կողմից, իր գիւղատնտեսութիւնը վերին աստիճանի վատ ու տարրական դրութեան մէջ է, տեղիս քաղաքեան գիտական ու արհեստագիտական (Տեխնիկ) ընկերութիւնները քննելով այդ հարցը, գերադասեցին որ բարձրագոյն դպրոցը լինի մասնագիտական, կամ պոլիտեխնիկում, կամ թէ բարձրագոյն գիւղատնտեսական դպրոց: Տեղիս քաղաքային ինքնավարութիւնը նոյնպէս շատ մեծ հուանով վերաբերվեց այդ մտքին եւ ի վերջոյ կանգ առաւ պոլիտեխնիկումի վրայ, այդ մասին ստանձնեց նախաձեռնութիւնը եւ աշխատեց գործը գլուխ բերելու: Տիֆլիս քաղաքը իր կողմից խոստացաւ հարիւր հազար ռուպլի, ինչպէս եւ ուրիշ քաղաքները, առեւտրական ու բանկային հիմնարկութիւնները որոշեցին բաւականին նշանաւոր գումարներ յատկացնել այդ դպրոցին: Սակայն այդ բուռն ցանկութիւններին, որով ամբողջ Անդրկովկասը ձգտում էր այդ դպրոցը ունենալ, հոգալ նրա պիտոյքները, մասնակցել ծախսերի մէջ, կառավարութիւնը պատասխանեց, որ խոստացումը գումարները չընչին մասն են կազմում այն ծախսերի հանդէպ, որ պահանջում է մի պոլիտեխնիկում, եւ որովհետեւ կառավարութիւնը չէ ուզում Անդրկովկասի վրայ այդ դպրոցի պատճառով մեծ ծախսեր անել, ուստի նա մերժում է Տիֆլիսի դպրոցի խնդիրը:

Պէտք է ստել, որ ուրիշ պատասխան գրեթէ չէր էլ սպասվում, որովհետեւ արդիւնները աւելի հիմնական են ու աւելի լուրջ:

Անցան տարիներ, եւ կրթական այս հարցը մնում էր նոյն դրութեան մէջ: Վերջերս, մի երկու ամիս սրանից անաջ, եկաւ կովկաս ուսումնականները քննելու, Լուսաւորութեան նախարարութեան անդամ, իշխան Գոլցիցին:

Մի քանի անձինք այցելեցին սրան եւ հարց բարձրացրին Պոլիտեխնիկումի մասին: Իշխանը, կարծեմ, նոյնպէս պատճառաբանեց դժուարութիւնը գրամի պակասութիւնով, հազիւ նա հետագա Տիֆլիսից, մեր քաղաքագլուխը, ինչպէս Քաղաքային Առուհուրդի մի քանի անդամները միասին գնացին Պ. Մանթաշեանի մօտ, խնդրելով որ նա որոշ գումար նուիրէ յօգուտ Պոլիտեխնիկումի եւ այնպիսի գումար, որով կարելի լինէր կառավարութեան ցուցած պատճառաբանութիւնները գոնացնել, ի նկատի ունենալով որ մօտ 300.000 ռուբլի խոստացուած է գանազան հիմնարկութիւնների կողմից Պ. Մանթաշեանը յայտնում է, որ նուիրում է վեց հարիւր հազար ռուպլի եւ հարիւր հազար ռուպլի առանձին, որպէս զի այն վերջին գումարի տոկոսներին իր անուանի թողակ նշանակուի չքաւոր ուսանողներին: Անմիջապէս նա հեռագիր տուեց իշխան իշխան Գոլցիցին իր արած օրոշման մասին:

Մանթաշեանի նուիրատուութեան մասին լուրը տարածուելուն պէս, տեղիս հասարակութեան մէջ զանազան կարծիքներ լսելի եղան: Թուրք, Վրաս-

ցին եւ այլք, ի հարկէ գովում էին այդ որոշումը: Հայերի մեծամասնութիւնը նոյնպէս, բայց կայ մի փոքր ամասնութիւն, որ անբուական է եւ չէ ողջունում Պ. Մանթաշեանի որոշումը, եւ անա թէ ինչու:

Ուրեմն կովկասցիք, Հայերը, Վրացիք, Թուսները եւ թիւրքի գանձի, զգուս էին իրանց որպէս կովկասցիք մի երկրի գաւակներ, Բայց անա ութսուտական թուականներից սկսած, երբ Թուս կայսր Ալեքսանդր Գ. ընդհանրեց որ Թուսաստանը պիտի լինի Թուսերի համար, ամենայն տեղ սկսեցին ընդունել այդ սկզբունքը, այսպէս եւ կովկասում: Վրացիք գրեթէ ազատ մնացին այդ խտրութիւնից, որպէս օրինակ թէ՛ կուրտական եւ թէ՛ անտեսական ուսումնասիրական մասումը սկսեց մի ուժեղ ու անընդհատ արշաւանք կատարել օտարականների դէմ:

Այսպէս վերջերս գրաւեց 200 հայ դպրոց իրենց կառուածներով հայ-կուրտական ձգտումները Վրացիք: Միւս կողմէ կովկասեան Վրացիք, վաղուց արդէն նախանձեղով հայերի անտեսական յաղողութեանը, օգտուելով այս ամենից, ձայն բարձրացրին, թէ Վրացի փողովուրդի անտեսական ու բարոյական անկման պատճառը հայերն են, որոնք բնակութիւն հաստատած են ամբողջ կովկասի մէջ, նոյն իսկ Վրաստան: Այդ խօսքերը դարձան նշանաբան Վրացի մտմտի ու հասարակութեան մէջ, որը օր ըստ օրէ աւելի ուժեղանում, տարածոււմ և լսելի է լինում:

Իրերի ներկայ գրութիւնը այժմ այսպէս է՝ գրեթէ արգիլուած է հայերին որ և է մի Գործ, որը կարող է նպաստել իրենց լեզուին, գրականութեանը, յաւերթութեանը: Երկու բարեգործական մարմինների կանոնադրութիւնները փոխուեցին, այժմ կարելի է օգնութիւն հասցնել միայն Ախր-կան կարիքներին, այսինքն սնունդով բնակարաններով, դեղերով, իսկ որ և է կրթական ձեռնարկներ կամ նոյն իսկ չքաւոր աշակերտի ուսման վարձ տալը, այդ տեսակ բաներ արգիլուած են, Հրատարակչական Մարմինը փակուեց, դպրոցները գրաւեցան, և ի հարկէ ոչ ոք դպրոցներին դրամ չէ նուիրում:

Միւս կողմից սեղիս օտարազգիները ոչ մի կողմէ չեն նուիրում հայերի պիտոյքներին, բայց բարձրական երեկոյթներին, պարահանգէսներին, որ եւ է ժողովարարութիւններին օտարազգիները ներկայ չեն լինում չեն մասնակցում, իսկ տեսք թէ ի՛նչ չուրումներն են գնում իրանց օգտին հայերի գրականներից: Երկուք, իրենց հասարակային պիտոյքներին համար երբ ժողովարարութիւններ են անում, առանց այլ և այլի սկսում հայերից, նոյնպէս և ունեւրը: Բացի դրանից տեղիս հայ վաճառականները թէ կենդանութեան օրօք և թէ կտակելով, անազին գումարներ են յատկացնում ընդհանուր բարեգործութեանը, յայտնելով որ այդ գումարներից իրաւունք ունի օգտուել ամեն մի ոք, առանց դաւանանքի ու ազգութեան խտրութեան: Վրացիներին մէջ այդ տեսակ բան չկայ, թէպէտ այն էլ պիտի սաս, որ անհասարակ բարեգործութիւնը գրանց մէջ շատ շնչին է: Բայց զարմանալին այն է, որ ամէն հիմնարկութեան մէջ, որոնց հայերը բաւականին մեծ գումարներ են նուիրել, օրինակ, գիւնազիւնների և ռեւալական դպրոցների,

տեղի ունի ոչ-բարեացակամ վերաբերում գէպի հայերը:

Այս տեսակ օրինակներ շատ կարելի էր բերել ցոյց տալու համար, թէ որքան տարբեր են մի կողմից Վրացիների և ուսու կառավարութեան վերաբերումը գէպի հայերը, և սրանց գէպի վրացիները, այդ տարբերութիւնը մինչեւ անգամ ասիթ է տուել Վրացի մի քանի հրատարակաւորներին սկիւրակ անել կովկասահայերի արժանապատուութեան մասին:

Եթէ ծիծաղելի է և չափազանցութիւն մի վրացու կողմից, որը յայտնել էր տեղական լրագիրներում, որ նա կը նուիրէ «մի հազար» ռուբլի, եթէ հիմնուելիք Պոլիտեխնիկումը կրէ Վրացի մի նախկին աշխուսական անունը, նոյնպէս և ցանկալի չէ, որ հայերը այդպիսի թիւթեւութեամբ անազին գումարներ նուիրեն: Կովկասահայերի Բարեգործական պիտոյքները առանց այն էլ շատ են, Ուրեմն կովկասի հայերը նախ հարկ է իրանք իրանց բաւեն, նա մանաւանդ, որ ուրիշներին սաղով նրանք, յարգանք ու շնորհակալութիւն չեն գրաւում, այլ ծաղր, արհամարանք:

700,000 ռուբլի մի անազին գումար է, եւ այդ տեսակ նուէր յայտնի չէ կովկասեան տարեգրութեան մէջ, եւ ինչու գրկել էջմիածնի վարժարանը այդ գումարից ու նուիրել մի օտար դպրոցին ուր վերջի վերջոյ հայ ուսանողների թիւը ու եւ է կերպով կը սահմանափակուի:

Թերեւս Պ. Մանթաշեանը, որ իր անազարկին պատասխան չէ ստացած համարէ իրան այսուհետեւ աղաւ:

«Մանգուսի էփիսոս»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղխասախանաւ ընկերութեան հայաց Վառնայի

Ընկերութեան ընդհ. ժողովը պիտի գումարուի յատկապէս կերակրել 15 յունիս կէս օրէն առաջ ժամը ժրտ 9/2ին Ազգ. վարժարանի սրահին մէջ եւ պիտի ընտրէ:

Ա. Ընդհ. ժողովոյ Դիւանը.
Բ. Պիտի վաւերացնէ ժողովոյն կողմի պատրաստուած Ընկերութեան հիմնական կանոնագրութիւնը:
Գ. Եւ պիտի ընտրէ մնայուն գործ. ժողովը:

Ուստի կը հրաւիրուին ընկերութեան անդամները և անդամակիցի փափաքող ազգայիններ ներկայ գտնուելու Ընդ. ժողովին:

Մնամք Թարքանօք

Առժամանակեայ Գործադիր Ժողովի 13 Յունիս 1903
Վ ա ո ն ա

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրենք մեր բաժանորդներին որ շտապին բաժնեգրիները վճարել:

Փիլիպէի բաժանորդները կրնան բաժնեգրիները անմիջապէս յանձնել Տ. Անտօն Գօշի, որմէն կրնան ընդունել ընկալագիրներ:

Խ Ն Ե Ր Ա Ղ Ո Ւ Յ Ի Ն

ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐԷՆ ՍԱՐՈՒՆ

Ատա-նեկրի և հայ աղջիկ, ինչ հակասութիւն. մէկը իտէալի սանդուխին բարձր աստիճանին վրայ, մարդկութեան ցար երգող ընդհանուրին տառապանքով տանջուող, իր նմաններուն բարեխառութեան ինքնամոռաց աշխատող, իսկ միւսը, հայ աղջիկը ամեն բանի անտարբեր իր գերութեան անգիտակից, մինչև անգամ անգունդին ծայրը գլուխը իր հայրենիքին մօտալուտ անկման անզգայ ականասեւ, իր արեւնակից քոյրերու, կեղծքումներուն, բռնաբարոյններուն անոնց ազդեցութիւնը ձայններուն առջեւ խուս-համար քնած, գիտկ:

Ահա անվիճելի հակապատկեր:

Եւ Ատա-նեկրին մինակ չէ. քանի՞ներ կան անոր պէս, հիմա մեր սեռին մէջ շատ կան այստուութեան աղջիկ զինուորներ: Բայց մեզմէ չկայ, հայ աղջիկէն չկայ, որովհետեւ ինքը դեռ գերի է, իրեն ձեռքը, իր նախապաշարուններու, իր ընտանիքին ձեռքը գերի է:

Տեսէք, ինչ կըսէ մեզ համար Մարտն: Պուկար օրիորդը իսկ ալ աւելի կը հառաչէ, անօգնական հայ աղջիկը, այո հայ աղջիկը ասիական ընտանիքի խեղդիչ ու թունաւոր մթնոլորտին մէջ որուն սիրտը բարի ծնողքները ի խաչ կը հանեն ոսկի տուրակին գիծաց: Այո, ճիշտ է, շատ ճիշտ: Մեր մթնոլորտը խեղդիչ է, ապականած, մեր շնչած օդը թունաւոր, ազատութիւն, ազատ կամքը թունաւորող, առողջ միտքը թմրեցնող: Միթէ չէ՞ք զգար, չէ՞ք տեսներ որ մեր այս անտարբերութիւնը այսքան տառապանքներու, այսքան անիրաւութիւններու դէմ, մեր քունը ամենուն գործած ատեն, ապացոյց են մեր թմրութեան հասած անզգայութեան:

Ինչ է մեր ընտանեկան կեանքը, ինչ է մեր հասարակական կեանքը: Ընտանիքի մէջ մենք ապրանքներ ենք մեր ծնողած ձեռքը, իսկ հասարակական կեանքի, հասարակական գործունէութեան նշոյլն անգամ չկայ մեր մէջ: Մի բարկան՝ ար հայ աղջիկներ, մենք ապրանքներ ենք, անսիրտ, անհոգի, մենք ստոր կերպով կը ծախուինք ամուսնութեան վսեմ գաղափարին տակ. եթէ գեղեցիկ ես աւելի սուղ և հարուստ փեսայ քեզ բաժին, իսկ եթէ սգեղ ես աւելի ածան: Եւ մենք կը վիրաւորուինք, կը բողոքենք: Ահ, մենք ընդհակառակը վարժուած մեր տպրանքի ստոր գերին, իտէալ ենք չի-

ներ ստակը, փեսան, զօրգը: Ինչ ամօթ:

Միթէ բոլոր յանցանքը, ծնագաց, միջնափայրին, մթնոլորտին վրայ նետելով պիտի արգարացնենք, պիտի մխիթարենք ինքզինքնի՞ս. չպիտի զգանք որ մեր քոյրն ալ է յանցանքը և ամենախոշորը որ մենք եթէ ուզենք կրնանք գտնել կենսատու, մտքուր, ազատ օդ շնչելու: Չպիտի ցուցնենք որ հայ աղջիկը թէպէտեւ անօգնական, թէպէտեւ ասիական ուսմիկ միջնափայրի, շահաւէր ծնողներու ծնունդ, գիտէ փնտռել այն կազմութիւնը, բարերար օգը, որ ազատութեան ծարաւը արթնցնէ իր մէջ, և անյագ շնչել այն օդէն, մինչև որ ազատ օդին դեռ նոր վարժուող իր թոքերի ուսմով երգէ իր հայ օրիորդական ազատութեան երգը, իր ազատ շարժումներու դեռ նոր վարժուող ձեռքերով բարձրացնէ, «հայ աղջիկութեան իրաւունքներ»: Գրօջը, որպէս զի օր մը, աւելի ուշ, կարենայ աւելի բարձր, աւելի վսեմ գաղափարի իր նմաններու, հայրենակիցներու ազատութեան դրօշին պարզուելուն աշխատի:

Եւ այն ատեն, Մարո, այն ատեն եթէ դու ազատութեան գործիչ ես, կռուող ես, այն ատեն հայ աղջիկն ալ պիտի գայ քեզ ու ըսէ. — «Ես ալ կրնամ, ես ալ ուժ ունիմ, ես ալ կուզեմ քեզ պէս կռուիլ, բռնութեան, ազատութեան դէմ, ես ալ կրնամ զոհուիլ ազատութեան համար»:

10 Յունիս 1903
Ճիւղիպէ

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պուկար «Վեչերնա Քոչթա» թերթը կը տեղեկացնէ որ Բէմախի թով յիսունի չափ քիւրտեր յարձակեր են Ընծորակ վանքին վրայ, սպաններ են մի քանի վարդապետներ, մեղադրելով որ այդտեղ յեղափոխականներ ապստանած են: Վանքի իրեղէնները թալանված են, ինչպէս նաեւ բաւական ոչխարներ տարուած:

— Առաքել Մատուրեանց կողմից հայ միլիոնատէր, անձնասպան է եղեր իր ազգարկին մէջ, որ կը գտնուէր Երևանի մօտերը: Հանդուցեալը կողմից բարեգործներէն մին էր, 78 տարեկան և բոլորովին ամուրի: Վերջերս կը պատմուէր որ իր գործերը անջալող կերթալին և գրէթէ անանկանալու մօտ է: Գուցէ անձնասպանութեան պատճառը այդ ըլլայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անձրեւներ, կարկուտը թէ բոյսերուն և թէ ճանապարհներու բաւական վնասներ պատճառեր են:

— Պուկար մամուլին մէկ մասը նախարարները դատող պետական դատարանին որոշումը արգարացի կը գտնայ, իսկ մէկ մասն ալ կողմնակալ, յայտարարելով որ դատարանը ինքը գրել-խաւոր մեղադրանքները չընելով այլևս չի պիտի պատժէր այնպիսի յանցանքներու համար, որոնք ամեն նախարարութիւնը գործած է և կը գործէ:

— Անցեալ օր ոստիկանութիւնը Վանայի մէջ թուրք մը ձերբակալել է որ բաւական քանակութեամբ հրացոն և փամփուշտ գնած գաղտնի կերպով կուզէ եղեր Տէլի Օրման տանիլ:

— Սահմանազրի վրայ պուկար և թուրք զինուորներուն միջև ընդհանրումը տեղի ունեցել է, որով թուրք սահմանապահ զինուորները Պուկարի անցեր են: Թուրք զինուորներէն բաւական սպանուածներ կան:

— Ռոտայալօֆ եւրոպական թերթի մը թղթակցի յայտարարել է թէ Իշխանի դրութիւնը շատ ամուր է Պուկարի մէջ:

Ինք իր դատաւճռին կարեւորութիւն չիտար, որովհետեւ հաւատացած է թէ ազգային ժողովը այդ դատաւճռու պիտի բեկանէ:

— Ռոտայալօֆ իր կուսակիցներէն ամեն կողմէ քաջալերական հեռագիրներ կ'ըղեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուկար մէջ լուր տարածուել է որ պուկար յեղափոխականները ուղեր են վէշերի պաշտօնատունը օգը բարձրացնել:

— Արտասահմանի մէջ լուր տարածուած է որ Սուլթանը գահընկէց եղեր է. բայց Ֆրանսայի թուրք դեսպանը այդ լուրը բոլորովին սուտ կը հաշակէ:

— Տիւրքոյի և Բրիտանիոյ զորքերը թուրք զօրքերու և Առնաւլուաներու միջև մեծ ընդհանրում տեղի ունեցել է:

150 զինուոր սպանուել են և 90 շափ ալ առնաւուտ:

ՌՈՒՍԻԱ

Եւրոպական թերթերը կը հազորդեն որ Չարին կեանքէն դէմ դաւադրութիւն մը բացուել է Յարկոէ Սէլոին մէջ:

Չերքակալուած է մարդ մը որ

ոստիկանական բարձրագոյն պաշտօնէի համալգետով պալատին քովը կը պտբտարի եղեր:

— Մովսիս վարչութիւնը ուսուսակին ընկերութեան մը բաւական խոշոր նպաստ մը յատկացուցեր է, որպէսզի այդ ընկերութեան նաեւրը Պարսից ծոցին նաւահանգիստներուն հետ ուղղակի յարաբերութեան մէջ մըտնեն:

ՍԵՐՊԻԱ

Յրահայտի, Իտալիայի, Յունաստանի և Թուրքիոյ գեոպանները Պէլկրատէն հեռացել են:

— Նորընտիր թագաւորը հասեր է Պէլկրատ, ժողովուրդը մեծ ուրախութեան մէջ է: Դաւադիր սպանները ժողովներուն մէջ քիչ կերեւան: Թագաւորին կացութիւնը շատ դժուարին է դաւադիրներուն վերաբերմամբ, որովհետեւ մեծ պետութիւնները անոնց պատմութիւնը կը պահանջեն:

— Պուրէշի մէջ Սերպի դաւադիրներուն հակառակ մեծ միթինգ մը կը պատրաստուի:

— Գանի մը թերթեր կը հազորդեն որ Վլեքսանդր և Տրակա Աւստրիոյ էնթրիգներուն զոհ գացած են: Պէլկրատի Աւստրիական դեսպանը իր տրամադրութեան տակ խոշոր գումար մը ունի կաշառքներ տալու համար:

— Ելեւոսից նախկին նախարար Մարին քովիչ գատի պիտի են թարկուի, որովհետեւ Ալէքսանդր թագաւորին երէք տարուան պալատական ծախքերը ու թոշակը նախօրք վճարել է:

— Ինսպաններուն Պէլկրատէն հեռանալը ճնշող տպաւորութիւն գործած է ժողովուրդին վրայ: Կը կարծեն որ կառավարութիւնը կարեւոր խնդիրներ կը թագընէ:

— Թագաւորը իր տալիք երգումին մէջ հետեւեալը պիտի յայտատարէ: «Բարձրանալով Սերպիայի արքայական գահը և թագաւորակոն իշխանութիւնը ձեռքս առնելով, կը երդնում որ պիտի պահպանեմ Սերպիոյ անկախութիւնը, վարչութեան միութիւնը, սահմանադրութիւնը որուն օրինաց համաձայն պիտի կառավարեմ երկիրը և ամեն գործողութեանս մէջ երբէք աչքս չը պիտի փախցնեմ ժողովուրդին բարօրութիւնը»:

ՎԵՐՋԻՆ, ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Թերթը արդէն պատրաստ էր որ իմացանք թէ Դաշ. Պ. կեղրունական կոմիտէն արդէն դանձած է և 28 սնուկի կորուած մասին փոխարժէքը:

Անօր usurou շարխաններուն...

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна